

### ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության առաջատար մասնագետ,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Ուսումնասիրության արդյունքում նշվում է, որ ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը սահմանադրական փոփոխություններով պայմանավորված անցել է զարգացման մի քանի հաջորդական փուլեր, ընդ որում՝ յուրաքանչյուր փուլի անցումը ենթադրել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման գործող մոդելի փոփոխություն, ինչը լայն առումով չի նպաստել սահմանադրական կայունության երաշխավորմանը, սակայն, դրանով հանդերձ՝ Հեղինակի կողմից վեր են հանվել մի շարք հիմքեր, որոնց դեպքում սահմանադրական փոփոխությունների իրականացման հիշյալ սկզբունքի երաշխավորման տեսանկյունից կարող է հիմնավորված և արդարացված լինել:

*Հիմնարարներ՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, սահմանադրական կայունություն, սահմանադրական փոփոխություն, խորհրդարանական մոդել:*

Սահմանադրության կայունությունը պետությունում սահմանադրականության ամրապնդման և զարգացման նախապայմաններից է, որը ենթադրում է ձևավորված սահմանադրական արժեքների շարունակական զարգացման միջոցով Սահմանադրության կայունության ամրապնդում և ժամանակի մեջ գործունեության դինամիկայի ապահովում: Սակայն, դրանով հանդերձ, գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնք գործնականում խաթարում են ձևավորված սահմանադրական կայունության ամրապնդումը և զարգացումը: Թերևս հիմնական գործոններից մեկը՝ յուրաքանչյուր դեպքում, սահմանադրական փոփոխությունների իրականացումն է: Այս խնդիրը բնորոշ է նաև անցումային փուլում գտնվող հետխորհրդային պետություններին՝ այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությանը, որտեղ դրա արդյունքում նկատվում է սահմանադրական կայունության ապահովման դեֆիցիտ՝ պայմանավորված անկայության հռչակումից հետո սահմանադրական մակարդակում շարունակական բնույթ կրող և հաճախակի տեղի ունեցող փոփոխություններով, որոնք, հիրավի կրելով հիմնարար բնույթ՝ իրապես կարող են դիտարկվել՝ որպես սահմանադրական կայունության ամրապնդմանը խոչընդոտող գործոն:

Սակայն, դրանով հանդերձ, Սահմանադրության կայունության ապահովման հատկանիշը ոչ միայն չի բացառում, այլև որոշ դեպքերում հիմնավորապես ենթադրում է Սահմանադրության շարունակական զարգացում, քանի որ Սահմանադրությունը վերջին հաշվով լինելով «կենդանի փաստա-

թուղթ» հասարակական զարգացումներին համընթաց «վերափոփոխման», «ժամանակակից դառնալու» անհրաժեշտություն է ձեռք բերում: Այս առումով, թերևս համակարծիք ենք Ա. Մանասյանի այն դիտարկման հետ, որ Սահմանադրության տեսանկյունից «կայունությունը», «փոփոխելիությունը», «զարգացումը» միմյանց բացառող հասկացություններ չեն:

Սակայն, Սահմանադրության «զարգացումը» իրենից դոգմատիվորեն չի ենթադրում միայն փոփոխությունների իրականացման միջոցով դրա կենսագործման ապահովում, մի շարք պետություններում, հատկապես, որտեղ գոյություն ունի սահմանադրական մշակույթի զարգացման բարձր մակարդակ, ինչպես նաև՝ առկա է կայացած սահմանադրական արդարադատության ինստիտուտը: Սահմանադրությունը առավելապես զարգանում է ոչ թե Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելու ճանապարհով, այլ Սահմանադրության նորմերի շարունակական մեկնաբանման միջոցով: Այս առումով թերևս հիշատակության արժանի է Լ. Ֆրիդմենի այն դիտարկումը, համաձայն որի՝ ԱՄՆ-ի Գերագույն դատարանը պարզապես չի մեկնաբանում Սահմանադրության տեքստը, այսինքն՝ միայն չի հետազոտում, թե ինչ են Սահմանադրության դրույթներում նկատի ունեցել գրողները, այլ անում է ավելին, *դատարանը մշակում և ընդլայնում է սահմանադրական դոկտրինան*<sup>3</sup>: Հենց այս հանգամանքով է պայմանավորված այն, որ ԱՄՆ-ի Սահմանադրության տեքստում քիչ թվով փոփոխություններ են կատարվել,

իսկ կատարվածներն էլ այսպես կոչված «հիմնա-  
քարե բնույթ» չեն կրել:

Բոլոր դեպքերում Սահմանադրության կայունության երաշխավորման տեսանկյունից Սահմանադրության զարգացումը առավել արդյունավետ կարող է լինել այն դեպքում, երբ այն կիրառործվի Սահմանադրության նորմերի շարունակական մեկնաբանման միջոցով, իսկ Սահմանադրության տեքստում փոփոխության իրականացումը պետք է իրականացվի միայն այն պարագայում, երբ, որևէ մեկնաբանման միջոցով այլևս հնարավոր չէ ապահովել Սահմանադրության նորմերի «արդիականացումը»:

Յուրաքանչյուր պետությունում, այդ թվում՝ նաև ՀՀ-ում Սահմանադրության կայունության երաշխավորումը անմիջականորեն առնչվում է նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական հիմնարար սկզբունքի արդյունավետ կիրառման ապահովման հետ: ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը սահմանադրական փոփոխություններով պայմանավորված անցել է զարգացման մի քանի հաջորդական փուլեր, ընդ որում՝ յուրաքանչյուր փուլի անցումը ենթադրել է իշխանությունների բաժանման և հավասարակշռման գործող մոդելի փոփոխություն: Այսպես՝ 1990-1991թթ. ՀՀ-ում գործում էր իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդել՝ որոշ առանձնահատկություններով, 1991-1995թթ՝ գործում էր նախագահական մոդել՝ նույնպես որոշ առանձնահատկություններով, 1995-2005թթ՝ կիսանախագահական կառավարման նախագահական-խորհրդարանական մոդել էր, 2005-2015թթ՝ կիսանախագահական կառավարման խորհրդարանական-նախագահական մոդել, իսկ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով պայմանավորված անցում կատարվեց իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի<sup>4</sup>:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման վերը նշված մոդելների հաջորդական փոփոխությունները որքանով էլ որ դրանք միտված են եղել նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի ապահովման ոլորտում առկա խնդիրների հաղթահարմանը, այդուհանդերձ, գործնականում չեն նպաստել հիշյալ սկզբունքի կիրառման ընթացքում ձևավորված սահմանադրական արժեքների ամրապնդմանը, քանի որ յուրաքանչյուր մոդելի փոփոխություն՝ պայմանավորված փոփոխության ծավալով, ենթադրել է պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգի վերափոխում, գործառույթների վերաբաշխում, ինչպես նաև՝ իշխանու-

թյան ճյուղերի միջև գործող զսպումների և հավասարակշռման նոր մեխանիզմների ամրագրում, իսկ յուրաքանչյուր նոր կառուցակարգային մեխանիզմների արդյունավետ ապահովման նպատակով անհրաժեշտ է որոշակի ժամանակ:

Այս առումով, թերևս իր հիմնարար բնույթով առանձնանում են 2015թ. ՀՀ սահմանադրական փոփոխությունները, քանի որ դրա արդյունքում գործող իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական-նախագահական մոդելից անցում կատարվեց խորհրդարանական մոդելի: Խորհրդարանական մոդելին անցումը, պայմանավորված նաև դրան բնորոշ առանձնահատկություններով, ինչպես նաև՝ կատարվելիք փոփոխությունների համալիր բնույթով, իրապես, բարդ գործընթաց է, որը ենթադրում է՝ պետական իշխանության մարմինների ինստիտուցիոնալ համակարգի վերափոխում, դրանց վերապահված գործառույթների և լիազորությունների վերաբաշխում, ինչպես նաև՝ պետական իշխանության մարմինների միջև զսպումների, հավասարակշռման և փոխընդհանրման նոր մեխանիզմների նախատեսում:

Նշվածի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ ՀՀ-ում իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի արդյունավետ գործունեության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հարկ է ապահովել պետական իշխանության ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգի և պետական իշխանության ճյուղերի միջև պետական իշխանության գործառույթների սահուն, առանց սահմանադրական ճգնաժամերի այնպիսի վերաբաշխում և վերակազմակերպում, որի արդյունքում հնարավոր կլինի պետական իշխանության ճյուղերի միջև գործառույթ-ինստիտուտ-լիազորություն համակարգային շղթայի կենսագործմամբ ապահովել սահմանադրական հավասարակշռվածություն:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից սահմանադրական փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորող գործոններից մեկը այն է, որ հիշյալ սկզբունքը պետական իշխանության կազմակերպման առջև ծառայած խնդիրների լուծման հրամայականով պայմանավորված՝ անընդհատ զարգանում է և ձեռք է բերում վերափոխման անհրաժեշտություն: Հետևաբար՝ ինչպես արդեն նշել ենք, Սահմանադրության կայունության երաշխավորումը չի ենթադրում դոգմատիվորեն սահմանադրական փոփոխությունների իրականացման վերաբերյալ բացասական մոտեցման առկայություն: Դեռ ավելին, որոշ դեպքերում, սահմանադրական փոփոխու-

թյունների իրականացումը ուղղակի կարևորություն է ձեռք բերում, այդ թվում՝ նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման տեսանկյունից<sup>5</sup>: Նշվածով պայմանավորված գտնում ենք, որ սահմանադրական փոփոխությունների իրականացումը իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից կարող է հիմնավորված և արդարացված դիտարկվել, եթե միտված է լուծելու հետևյալ խնդիրները՝

- *Ժամանակակից ընկալումներին և զարգացման միտումներին համահունչ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հետևողական կատարելագործում.*
- *պետական իշխանության մարմինների ինստիտուցիոնալ համակարգի հստակեցում.*
- *պետական իշխանության մարմինների գործառնությունների շրջանակի որոշակիացում.*
- *պետական իշխանության մարմինների գործառնության ղեկավարության ապահովման երաշխիքների ամրապնդում.*
- *գործառնություն-ինստիտուտ-լիազորություն շղթայի արդյունավետ կիրառման բավարար երաշխիքների նախատեսում.*
- *պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռվածության խախտումների վեր հանման, գնահատման և հաղթահարման մեխանիզմների կատարելագործում.*
- *Պետական իշխանության մարմինների միջև զսպումների, հավասարակշռման և փոխընդդրման մեխանիզմների կատարելագործում.*
- *պետական իշխանության մարմինների գործառնությունների իրականացման համար պետական իշխանության մարմիններին զսպող, հավասարակշռող և փոխընդդրող բավարար լիազորությունների տրամադրում.*
- *օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար խորհրդարանական ընդդիմության դերակատարության ընդլայնում.*
- *պետական իշխանության օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերից դատական իշխանության անկախության երաշխիքների ամրապնդում.*
- *պետական իշխանության մարմինների միջև առաջացած սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճերի սահմանադրական ճանապարհով լուծման մեխանիզմների երաշխավորում:*

Վերը նշվածի կապակցությամբ թերևս անհրաժեշտ ենք համարում նշել, որ Վեներտիկի հանձնաժողովի նախագահ՝ Ջ. Բուքիբիոն 2015թ. Երևանում

կազմակերպված Մասնաճյուղական դատարանի դերը դատական իշխանության անկախության ապահովման գործում, գիտական մոտեցումներ և ժամանակակից մարտահրավերներ կոնֆերանսում անդրադառնալով 2015թ. սահմանադրական փոփոխություններին, ընդգծելով դրա հիմնավորվածությունը, այն գնահատել է առաջադիմական մի շարք ոլորտներում դրական առաջընթաց ապահովելու տեսանկյունից :

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ սահմանադրական կայունության երաշխավորման տեսանկյունից խորհրդարանական մոդելի անցումը նոր մարտահրավերներ է նաև պարունակում, քանի որ վերափոխվող պետական համակարգում թե իշխանությունների բաժանման և, թե հավասարակշռման հարցում մարտահրավերներն առավել ակնառու են<sup>8</sup>: Նշված մարտահրավերները նախևառաջ պայմանավորված են այն հանգամանքով, որ խորհրդարանական մոդելը ՀՀ համար նորույթ է, որի արդյունավետ կիրառումը պահանջում է պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունների հիմքում դնել նոր մոտեցումներ, հաշվի առնելով այդ մոդելին բնորոշ առանձնահատկությունները: Խորհրդարանական մոդելին բնորոշ առանձնահատկություններից մեկը պետական իշխանության օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռման ապահովման հիմնախնդիրն է: Ակնհայտ է, որ այս մոդելի անցման արդյունքում առաջացել է պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի «միատեղման», «կենտրոնացման» իրական վտանգ, ինչը պայմանավորված է նրանով, որ պետական իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերը ձևավորվելու են նույն քաղաքական ուժի կողմից, ինչը կարող է հանգեցնել զսպումների և հավասարակշռման մեխանիզմների ոչ արդյունավետ կիրառման:

Ամփոփելով նշենք, որ «*հաճախակի*» սահմանադրական փոփոխությունների իրականացումը չի նպաստում սահմանադրական կայունության ամրապնդմանը, հետևաբար՝ նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի արդյունավետ կիրառման երաշխավորմանը, այդուհանդերձ սահմանադրական փոփոխությունների իրականացումը կարող է ընդունելի և հիմնավորված համարվել, եթե միտված է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կիրառման ոլորտում առկա խնդիրների հաղթահարմանը:

<sup>1</sup> Սահմանադրության կայունության երաշխավորման մասին առավել մանրամասն տե՛ս, Gabriel L. Negretto, «The durability of constitutions in changing environments: explaining constitutional replacements in latin America», Working Paper # 350 - August 2008, էջ 2. հասանելի էր՝ <https://kellogg.nd.edu/publications/workingpapers/WPS/350.pdf>

<sup>2</sup> Տե՛ս, Ա. Մանասյան «Սահմանադրության կայունությունը և զարգացումը որպես սահմանադրականության ամրապնդման երաշխիք», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու (գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 92, հասանելի էր՝ [http://ysu.am/files/14Anahit\\_Manasyan.pdf](http://ysu.am/files/14Anahit_Manasyan.pdf)

<sup>3</sup> Տե՛ս, Л. Фридман, «Введение в американское право», Москва, Прогресс, 1993, ст. 286.

<sup>4</sup> Տե՛ս, Հ. Կեսոյան «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Արդարադատություն» հանդես, 2016թ. N 4., էջ 36-46.

<sup>5</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս, Հ. Կեսոյան «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ժամանակակից բնութագրիչները», «Դատական իշխանություն» հանդես, 2016թ. N 8-9., էջ 18-26.

<sup>6</sup> Այս մասին տե՛ս, մաև European commission for democracy through law, (Venice Commission) CDL-AD(2011)002, Opinion on the concept paper on the Establishment and Functioning of the Constitutional Assembly of Ukraine

<sup>7</sup> Տե՛ս, «Published on recommendation of the conference of constitutional control bodies of the states of new democracy, by the centre of the constitutional law of RA» NJHAR – 2015, p. 12, հասանելի էր՝

<http://www.concourt.am/armenian/almanakh/almanac2015/almanac2015.pdf>

<sup>8</sup> Առավել մանրամասն տե՛ս, Գ.Գ. Հարությունյան, «Երկրի իրավական անվտանգության երաշխավորումը որպես սահմանադրական ժողովրդավարության հաստատման կարևոր գրավական» 2017թ., էջ 16, հասանելի էր՝ <http://concourt.am/armenian/structure/president/articles/harutyunyan-02-2017.pdf>

Айк Кесоян

Аспирант академии государственного управления Республики Армения,  
Ведущий специалист юридического управления  
аппарата Президента Республик Армения

#### РЕЗЮМЕ

##### *Конституционная стабильность в качестве гарантии обеспечения конституционного принципа разделения и балансирования власти*

В результате исследования отмечается, что принцип разделения и балансирования власти в РА, обусловленный конституционными изменениями, прошел несколько последующих этапов развития. Переход в каждый новый этап подразумевал изменение действующей модели разделения и балансирования власти, что в широком смысле не способствовало гарантированию конституционной устойчивости, однако Автором были выявлены некоторые основы, в случае которых осуществление конституционных изменений с точки зрения гарантирования вышеотмеченного принципа может быть обосновано и оправдано.

**Ключевые слова:** принцип разделения и балансирования власти, конституционная устойчивость, конституционное изменение, парламентская модель.

Hayk Kesoyan

Phd student of public administration academy of the Republic of Armenia  
Staff of the President of Armenia, legal department, leading specialist

#### SUMMARY

##### *The Constitutional stability as a guaranty of provision of Constitutional principle of separation and balance of power*

It is stated in the research that the principle of separation and balance of power has passed several through successive stages of development which was attributable to constitutional changes. Transition from one stage to another has implied a change of active model of separation and balance of power which hasn't contributed to guaranteeing of constitutional stability but several bases have been revealed by the Author in case of which the implementation of constitutional changes can be justified and acquitted from the point of view of guaranteeing of above-mentioned principle.

**Keywords:** the principle of separation and balance of power, constitutional stability, constitutional change, parliamentary model.